



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

26.12.2014թ.

«ԳԱԿ- ՇՀԾԶԲ-11/3» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾԶԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում
ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել
ձեռքբերել «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային
համաձայնագրով նախատեսված ծառայություն (ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՀՀ ԱԺ ՇՀԾԶԲ-11/3-2015»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն
անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով, ոչ ուշ քան 2015թ.
հունվարի 16-ը, ժամը 10:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի
ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության գնումների բաժնի
գլխավոր մասնագետ Ա. Ավագյանը /հեռ.011513432,011513435/:

Հայտերը կբացվեն 2015թ. հունվարի 16-ին, ժամը 10:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների
համար՝ Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ձեռքբերումը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կարիքների համար՝ Տրանսպորտային միջոցների
տեխնիկական սպասարկման ձեռքբերման (որը կազմված է՝ չորս չափաբաժիններից)
տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական
տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում
են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի
(ծանուցման) N 10 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր
է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1) որին կցվում է գնացուցակը (հավելված 5.2):
Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ
ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Համաձայն <<Գնումների մասին>> օրենքի Հոդված 14, կետ 7-ի մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, սույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Միաժամանակ հայտնում ենք, որ «ՀՀ ԱԺ ՇՀԾՁԲ-11/3-2015» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
staff@parliament.am:

ՀԱՐԳԱՆՔՈՎ



Հ.ԹՈՎՄԱՍՅԱՆ

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ**

_____ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____ -ի կողմից N ՀՀ ԱԺ ՇՀԾՁԲ-11/3-2015 ծածկագրով
Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի _____ չափաբաժինն
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է
հայտը:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս
ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին
բացառվում է, բացառությամբ՝

- 1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
- 2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____ -ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

« _____ » _____ 20__թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1**ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3 ծածկագրով**

ընթացակարգի հրավերի

N ՀՀ ԱԺ ՇՀԾՁԲ-11/3-2015 ծածկագրով

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված **N ՀՀ ԱԺ ՇՀԾՁԲ-11/3-2015** ծածկագրով
ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի
նախագիծը, _____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափա- բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	5 տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ տեխնիկական սպասարկում			
2	5 տեղանոց մարդատար հետևի տանող ա/մ տեխնիկական սպասարկում			
3	4x4 տիպի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում			
4	Միկրոավտոբուս մինիվեն տիպի ա/մ տեխնիկական սպասարկում			
...	...			

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի
Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունյակում:****Հավելված 5.1-ին կցվում է գնացուցակը (հավելված 5.2), որը (Կայք է ներբեռնվում) մասնակցի կողմից
հաստատված բնօրինակ փաստաթղթի արտադրված (սկանավորված) տարբերակը (Ֆայլը):**

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

« _____ » _____ 20__թ.

(ամսաթիվը, ամիսը)

Գնացուցակ

Հ/Հ	Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման աշխատանքների անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները(տեսակները)			
		Չափ. 1 5 տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ	Չափ. 2 5 տեղանոց մարդատար հետևի տանող ա/մ	Չափ. 3 4x4 տիպի ավտոմեքենան եր	Չափ. 4 Միկրոավտո բուս մինիվեն տիպի ա/մ
1	2	3	4	5	6
1	Շարժիչի հանում և տեղադրում				
2	Շարժիչի հանում և տեղադրում կոնդիցիոների դեպքում				
3	Շարժիչի հանում և տեղադրում ԱՓՏ-ի դեպքում				
4	Շարժիչի վերանորոգում				
5	Շարժիչի վերանորոգում (V6) դեպքում				
6	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում				
7	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում				
8	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում				
9	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում				
10	Շարժիչի գլխիկի փականների և բնիկի հղկում				
11	Ուղղորդիչ վռանների փոխարինում				
12	Շարժիչի գլխիկի հղկում				
13	Շարժիչի բլոկի հղկում				
14	Փականի խցուկի փոխարինում				
15	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում				
16	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում				
17	Հրիչների փոխարինում				
18	Ատամնավոր փոկի փոխարինում				
19	Ծնկաձև լիսեռի հղկում				
20	Շարժիչի շղթայի փոխարինում				
21	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում				
22	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում				
23	Հանդարտիչի փոխարինում				
24	Մխոցի փոխարինում				
25	Մխոցային օղակների փոխարինում				
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
26	Յուղի և յուղի զտիչի փոխարինում				
27	Ավտոմեքենայի յուղում				
28	Յուղի և յուղի զտիչի փոխարինում յուղման համակարգի լվացումով				
29	Յուղի պոմպի փոխարինում				
30	Յուղի փոխարինում				
31	Յուղի զտիչի փոխարինում				
32	Վառելիքի ճկափողի փոխարինում				

33	Վառոցքի մոմի փոխարինում 1հատ				
34	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում				
35	Օդի զտիչի փոխարինում				
36	Ինժեկտորի ֆորսունկայի հանում տեղադրում 1 հատ				
37	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում				
38	Բենզամղիչի փոխարինում				
39	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում				
40	Ղեկավարման և սնման համակարգի համակարգչային դիագնոստիկա				
41	Ղեկավարման և սնման համակարգի համակարգչային դիագնոստիկա թերությունների վերացմամբ				
42	Ղեկավարման բլոկի հանում տեղադրում				
43	Վառելիքի բաքի հանում և տեղադրում				
44	Օդի ծախսի տվիչի փոխարինում				
45	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում				
46	Յուղի ճնշման տվիչի փոխարինում				
3. Սառեցման և արտածման համակարգ					
47	Հովիարի փոկի հանում և տեղադրում				
48	Հովիարի հանում և տեղադրում				
49	Ռադիատորի հանում և տեղադրում				
50	Հովացման հիդրոկցորդի փոխարինում				
51	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում				
52	Թերմոստատի փոխարինում				
53	Ջրի պոմպի փոխարինում				
54	Ջրի պոմպի նորոգում				
55	Խլարարարի կատալիզատորի նորոգում				
56	Ընդարձակման բաքի փոխարինում				
57	Խլարարի հանում և տեղադրում				
58	Հովացման հեղուկի փոխարինում				
4. Կսորդում, ՓՏ					
59	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում				
60	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում				
61	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում				
62	ՓՏ-ի հանում և տեղադրում				
63	ՓՏ-ի վերանորոգում				
64	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում				
65	Վազքաչափի շարժաբերի փոխարինում				
66	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում				
67	ԱՓՏ-ի մասնակի նորոգում				
68	ԱՓՏ-ի հանում և տեղադրում				
69	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում				
70	ԱՓՏ-ի վերանորոգում				
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ					
71	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում				

72	Բաշխիչ տուփի վերանորոգում				
73	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում				
74	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում				
75	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգմամբ				
76	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում				
77	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում				
6. Առջևի և հետևի կամրջակներ					
78	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում				
79	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում				
80	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում				
81	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասոռնու հանում և տեղադր.				
7. Կախոց					
82	Առջևի կախոցի հանում և տեղադրում				
83	Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում				
84	Առջևի կախոցի մասնակի քանդում և հավաքում				
85	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում				
86	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում				
87	Առջևի անվակունդի հանում և տեղադրում				
88	Հետևի անվակունդի հանում և տեղադրում				
89	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում				
90	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում				
91	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում				
92	Առջևի զսպանակի հանում և տեղադրում				
93	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում				
94	Ներքևի լծակի հանում և տեղադրում				
95	Ներքևի լծակի վռանների փոխարինում				
96	Գնդե հողակապերի փոխարինում				
97	Առջևի կայունարարի հանում և տեղադրում				
98	Առջևի կայունարարի վռանների փոխարինում				
99	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում				
100	Հետևի զսպանակների հանում և տեղադրում				
101	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում				
102	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում				
103	Գնդե հողակապի նորոգում				
104	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում				
8. Ղեկային մեխանիզմ					
105	Ղեկային կալունի հանում և տեղադրում				

106	Ղեկային ծողի առանցքակալի փոխարինում				
107	Ղեկային կալունի վերանորոգում				
108	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում				
109	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում				
110	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում				
111	Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում				
112	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում				
113	Ղեկային ծողի գնդե հողակապի նորոգում				
114	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում				
115	Ղեկի հանում տեղադրում				
116	Ղեկային ձգաձողի ծայրակալների հանում տեղադրում				
117	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում				
9. Արգելակային համակարգ					
118	Վակումային ուժեղարարի փոխարինում				
119	Գլխ. գլանի հանում և տեղադրում				
120	Գլխ. գլանի վերանորոգում				
121	Բանվ. գլանի հանում և տեղադրում				
122	Բանվ. գլանի վերանորոգում				
123	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում				
124	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում				
125	Առջևի սուպպորտի վերանորոգում				
126	Հետևի սուպպորտի վերանորոգում				
127	Արգելակային փողրակի փոխարինում				
128	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում				
129	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում				
130	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում				
131	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում				
132	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում				
133	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում				
134	ABS-ի հանում և տեղադրում				
135	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում				
136	Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում				
137	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում				
138	Արգելակային հեղուկի փոխարինում				
10. Էլեկտրասարքավորում					
139	Գեներատորի հանում և տեղադրում				
140	Գեներատորի վերանորոգում				
141	Մեկնարկիչի հանում և տեղադրում				
142	Մեկնարկիչի վերանորոգում				
143	Առջևի լապտերի հանում և տեղադրում				

144	Հետևի լապտերի հանում և տեղադրում				
145	Առջևի լապտերների կարգավորում				
146	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում				
147	Վազքաչափի հանում և տեղադրում				
148	Վազքաչափի ճուպանի հանում և տեղադրում				
149	Արագաչափի հանում և տեղադրում				
150	Ազդանշանի հանում և տեղադրում				
151	Ապակեվացիչի շարժիչի հանում և տեղադրում				
152	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում				
153	Ազդանշանային համակարգի տեղադրում				
154	Մագնիստոլայի տեղադրում				
155	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում				
156	Էլ/հաղորդալարերի հիմն. խտրցի հանում և տեղադրում				
157	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խտրցի հանում և տեղադրում				
11. Ավտոմեքենայի սրահ					
158	Դռան պաստառի հանում և տեղադրում				
159	Նստարանի հանում տեղադրում				
160	Սրահի պաստառապատում				
161	Սրահի ծայնամեկուսացում				
162	Դիմապակու փոխարինում				
12. Այլ ծառայություններ					
163	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 կտորի համար				
164	Ավտոմեքենայի թափքի հղկափայլեցում գին 1 կտորի համար				
165	Եռակցման աշխատանքներ գին 1սմ (զծ.մ) համար				
166	Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար				
167	Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար				
168	Ավտոմեքենայի լվացում				
169	Անվաբացքի կարգավորում				
170	Կոնդիցիոների լիցքավորում				
171	Անվադողի վերանորոգում				
172	Անիվի բալանսավորում				
173	Ավտոմեքենայի սրահի չոր քիմ մաքրում				
174	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար				
Ընթացիկ, միջին և հիմնական նորոգման ընթացքում օգտագործվող պահեստամասերի, նյութերի և այլ օժանդակ նյութերի անվանումները					
1.Շարժիչ					
1.1	Շարժիչի բլոկ				
2.1	Շարժիչի գլխիկ				
3.1	Բարձիկ				
4.1	Շարժիչի գլխիկի միջադիր				
5.1	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ				

6.1	Շարժիչի բաշխիչ լիսեռ				
7.1	Շարժիչի փական դուրս մղող				
8.1	Շարժիչի փական ներս մղող				
9.1	Շարժիչի փականի խցուկ				
10.1	Ծնկաձև լիսեռ				
11.1	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի				
12.1	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի				
13.1	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ				
14.1	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ				
15.1	Հենակային տափողակ				
16.1	Մխոց				
17.1	Մխոցային օղակներ գին 1 կոմպլեկտի համար				
18.1	Ատամնանիվ				
19.1	Ատամնավոր փոկ				
20.1	Շղթա				
21.1	Հիդրոոձգան				
22.1	Հրիչ				
23.1	Հիդրոհրիչ				
24.1	Բաշմակ				
25.1	Հանգստարար				
26.1	Թափանիվ				
27.1	Թափանիվի պսակ				
28.1	Խցուկ բաշխիչ լիսեռի				
29.1	Շկիվ				
30.1	Շարժաթև				
31.1	Կարտերի միջադիր				
32.1	Գլխիկի միջադիր				
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
33.1	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր				
34.1	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր				
35.1	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր				
36.1	Յուղման համակարգի վազման հեղուկ 1 լիտր				
37.1	Ինժեկտորի մաքրման հեղուկ				
38.1	Կոնդիցիոների զտիչ				
39.1	Յուղի զտիչ				
40.1	Յուղի պոմպ				
41.1	Յուղի պոմպի շարժաբեր				
42.1	Յուղի ռադիատոր				
43.1	Յուղի փողրակ				
44.1	Յուղի ծորակ				
45.1	Վառոցքի մոմ				
46.1	Բենզոբաք				
47.1	Ինժեկտորի ֆորսունկա				
48.1	Վառելանյութի մղիչ էլեկտրական				
49.1	Վառելանյութի զտիչ				
50.1	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման				

51.1	Վառելանյութի փողրակ				
52.1	Աքսելերատորի ճոպան				
53.1	Օդի զտիչ				
54.1	Ջերմաստիճանային տվիչ				
55.1	Յուղի տվիչ				
56.1	Բաշխիչ լիսեռի տվիչ				
57.1	Օդի ծախսի տվիչ				
58.1	Արագաչափի տվիչ				
59.1	Հովիարի տվիչ				
60.1	Ջրի տվիչ				
61.1	Բենզոբաքի տվիչ				
62.1	Մարման ընթացքի կարգավորիչ				
63.1	Ղեկավարման համակարգիչ				
64.1	Պարապ ընթացքի տվիչ				
65.1	Դրոսելային փականի տվիչ				
66.1	Թթվածնի տվիչ				
	3. Սառեցման և արտածման համակարգ				
67.1	Հովիարի փոկ				
68.1	Հովիար				
69.1	Ռադիատոր				
70.1	Ընդարձակող բաք				
71.1	Ռադիատորի փողրակ				
72.1	Թերմոստատ				
73.1	Ջրի պոմպ				
74.1	Ջրի պոմպի խցուկ				
75.1	Ջրի պոմպի առանցքակալ				
76.1	Ջրի պոմպի թևակ				
77.1	Սառեցման հեղուկ	1 լիտր			
78.1	Ձգիչ հոլովակ				
79.1	Փոկ				
80.1	Փոկ կոնդիցիոների				
81.1	Ծորակ				
82.1	Խլարարի ներդիր				
83.1	Խլարարի կախոց				
84.1	Կրոնշտեյն				
85.1	Անուր (խամուտ)				
86.1	Խլարար				
87.1	Ռեզոնատոր				
88.1	Վառարանի ռադիատոր				
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
89.1	Կցորդման բանվորական գլան				
90.1	Կցորդման գլխավոր գլան				
91.1	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու				
92.1	Կցորդման տանող սկավառակ				
93.1	Կցորդման տարվող սկավառակ				
94.1	Կցորդման առանցքակալ				
95.1	Կցորդման փողրակ				
96.1	ՓՏ-ի առջևի խցուկ				

97.1	ՓՏ-ի հետևի խցուկ				
98.1	ՓՏ-ի առանցքակալ				
99.1	ՓՏ-ի առաջնային լիսեռ				
100.1	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ				
101.1	ՓՏ-ի եղանիկ				
102.1	ՓՏ-ի ատամնանիվ				
103.1	Համաժամիչ				
104.1	Մուֆտ				
105.1	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ				
106.1	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր				
107.1	Հերմետիկ				
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ				
108.1	Բաշխիչ տուփ				
109.1	Բաշխիչ տուփի խցուկ				
110.1	Բաշխիչ տուփի առանցքակալ				
111.1	Բաշխիչ տուփի ատամնանիվ				
112.1	Բաշխիչ տուփի լիսեռ				
113.1	Կարդանային լիսեռ				
114.1	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ				
115.1	Կարդանային լիսեռի խաչուկ				
	6. Առջևի և հետևի կամրջակներ				
116.1	Հետևի կամ առջևի կամրջակ				
117.1	Ռեդուկտոր				
118.1	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ				
119.1	Դիֆֆերենցիալ				
120.1	Դիֆֆերենցիալի սատելլիտ				
121.1	Տանող ատամնանիվի խցուկ				
122.1	Տանող ատամնանիվի առանցքակալ				
123.1	Դիֆֆերենցիալի առանցքակալ				
124.1	Կիսաստնի				
125.1	Կիսաստնու առանցքակալ				
126.1	Կիսաստնու միջադիր				
127.1	Կիսաստնու խցուկ				
128.1	Կարգավորիչ տափողակ				
	7. Կախոց				
129.1	Տրավերս				
130.1	Կրոնշտեյն				
131.1	Ձախ կամ աջ հողակապ				
132.1	Ձախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց				
133.1	Անվակունդ				
134.1	Անվակունդի խցուկ				
135.1	Անվակունդի ներքին առանցքակալ				
136.1	Անվակունդի արտաքին առանցքակալ				
137.1	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ				
138.1	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ				
139.1	Ձախ կամ աջ հողակապի խցուկ				
140.1	Հարվածամեղմիչի թասակ				
141.1	Ջսպանակ				

142.1	Առջևի հարվածամեղմիչ				
143.1	Հարվածամեղմիչի վռան				
144.1	Ներքևի լծակ				
145.1	Ներքևի լծակի վռան				
146.1	Վերևի լծակ				
147.1	Վերևի լծակի վռան				
148.1	Գնդե հողակապ				
149.1	Առջևի կայունարար				
150.1	Առջևի կայունարարի վռան				
151.1	Առջևի կայունարարի կանգնակ				
152.1	Հետևի զսպանակ				
153.1	Հետևի ցնցամեղմիչ				
154.1	Հետևի մետաղաձող (շտանգա)				
155.1	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան				
156.1	Անվահեծ				
	8. Ղեկային մեխանիզմ				
157.1	Ղեկային կալուն				
158.1	Ղեկային կալունի առանցքակալ				
159.1	Ղեկային կալունի խաչուկ				
160.1	Հիդրոուժեղարարի փոկ				
161.1	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ				
162.1	Հիդրոուժեղարարի պոմպ				
163.1	Ղեկային ձող				
164.1	Ղեկային ձողի ծայրակալ				
165.1	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր				
166.1	Ճոճանակ				
167.1	Ճոճանակի վռան				
	9. Արգելակային համակարգ				
168.1	Գլխ. գլան				
169.1	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ				
170.1	Վակուումային ուժեղարար				
171.1	Բանվ. գլան				
172.1	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ				
173.1	Արգելակային փողոակ				
174.1	Սուպպորտի մանժետ				
175.1	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ				
176.1	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ				
177.1	Առջևի արգելակային սկավառակ				
178.1	Հետևի արգելակային սկավառակ				
179.1	Ձեռքի արգելակի ճոպան				
180.1	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ				
181.1	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ				
	10. Էլեկտրասարքավորում				
182.1	Գեներատոր				
183.1	Գեներատորի դիողային կամրջակ				
184.1	Գեներատորի ռեկտ				
185.1	Գեներատորի առանցքակալ				
186.1	Ստարտեր				

187.1	Ստարտերի ռելե				
188.1	Ստարտերի ածուխ				
189.1	Բենդեքս				
190.1	Առջևի լապտեր				
191.1	Առջևի թարթիչ				
192.1	Հետևի լապտեր				
193.1	Հետևի թարթիչ				
194.1	Արգելակային լապտեր				
195.1	Լապտերի լամպ				
196.1	Էլեկտրական անջատիչ				
197.1	Բռնկման կողպեք				
198.1	Էլեկտրալարերի գլխավոր խուրց				
199.1	Էլեկտրալարերի երկրորդային խուրց				
200.1	Վառոցքային լարերի խուրց				
201.1	Վառոցքի մոմի ծայրակալ				
202.1	Վազքաչափ				
203.1	Վազքաչափի ճուպան				
204.1	Ազդանշան				
205.1	Ապակեվազիչի շարժիչ				
206.1	Ազդանշանային համակարգ				
207.1	Մագնիստոլա				
208.1	Էլեկտրաամբարձիչ				
209.1	Էլեկտրաամբարձիչի շարժիչ				
210.1	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1 կտորի վերանորոգման համար				

*** Մզեցված վանդակները ծառայության տեսակ չեն հանդիսանում**

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

« _____ » _____ 20__թ.
(ամսաթիվը, ամիսը)

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N

ք. Երևան

«_____» _____ 20__թ.

_____, ի դեմս Ընկերության տնօրեն՝

Մասնակցի անվանումը
_____, որը գործում է Ընկերության կանոնադրության

Ընկերության տնօրենի անուն ազգանունը
հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի
համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է _____

Պատվիրատուի անվանումը
(այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Տրանսպորտային միջոցների տեխնիկական
սպասարկման ծեռքբերման» N _____ ծածկագրով ընթացակարգին, պետք է ներկայացնի
պայամանագրի ապահովում և ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրով Ընկերության
ստանձնած պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու
նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «Տրանսպորտային միջոցների տեխնիկական
սպասարկման ծեռքբերման» N _____ գնման պայմանագրից բխող
պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, պայմանագրով ստանձնած
պարտավորությունների կատարումից խուսափելու կամ հրաժարվելու, ինչպես նաև գնումների մասին ՀՀ
օրենսդրությամբ սահմանված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում,
Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ _____թվերով _____ (_____
_____տառերով _____) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված
պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման
պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ
ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուին, առանց նախնական պահանջ
ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն
համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Մասնակցի բանկի
անվանումը» կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած
հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը», հանձնարարում է «Մասնակցի բանկի անվանումը»-ին, ինչպես նաև իրեն
սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում
«Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն
համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով
գանձել պահանջվող գումարը:

2. Այլ պայմաններ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և
կնքման պահից և գործում է մինչև 20__թ. _____-ի _____-ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել,
փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների
միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

_____ ,

Մասնակցի անվանումը (անունը)

_____,
(հասցեն)

_____,
(քանկ)

Հ/Հ _____

ՀՎՀՀ _____

_____,
(Մասնակցի ղեկավարի պաշտոնը, անուն, ազգանուն)

_____,
(ստորագրություն)

_____,
(Մասնակցի գլխավոր հաշվապահի (հաշվապահի), անուն, ազգանուն)

_____,
(ստորագրություն)

Կ.Տ.

ԵՐԱՇԽԻՔ

ք. Երևան

« _____ » _____ 20__թ.

Ընդունելով ի գիտություն, որ _____-ի (այսուհետև՝ Բենեֆիցիար) և _____-ի (այսուհետև՝ Պրինցիպալ) միջև _____ N _____ գնման պայմանագիր (այսուհետև՝ Պայմանագիր) կնքելու համար Պրինցիպալը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում _____ ՀՀ դրամ գումարի չափով (այսուհետև՝ Երաշխավորի գումար), _____ (այսուհետև՝ Երաշխավոր) ստանձնում է անվերապահ պարտավորություն հանդես գալ որպես Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների (ժառանգների) Երաշխավոր և Պրինցիպալի ու նրա իրավահաջորդների (ժառանգների) հետ համապարտ պարտապան, ի ապահովումն Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների պատշաճ, ժամանակին և ամբողջ ծավալով կատարման:

Պրինցիպալի կողմից Պայմանագրով ստանձնվելիք պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, Պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում Երաշխավորը պարտավորվում է անհապաղ վճարել Բենեֆիցիարին պահանջված գումարը, ինչպես նաև իրավունք է վերապահում Բենեֆիցիարին, առանց Երաշխավորին նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով վճարման պահանջագրով գանձել համապատասխան գումար, Երաշխիքային գումարի սահմաններում, Երաշխավորի ՀՀ Կենտրոնական բանկում կամ Երաշխավորի ցանկացած թղթակից բանկում բացված՝ Երաշխավորի ցանկացած այլ հաշվից:

Սույնով Երաշխավորը հանձնարարում է ՀՀ Կենտրոնական բանկին, իր բոլոր թղթակից, ինչպես նաև իրեն սպասարկող բանկերին պայմանագրի ամբողջ ժամկետի ընթացքում Բենեֆիցիարի առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով Երաշխավորի թղթակցային և (կամ) այլ հաշիվներից անվիճելի կարգով գանձել պահանջվող գումարը:

Սույն Երաշխիքը տրվում է մեկ օրինակից, և չի կարող հետ կանչվել կամ վաղաժամկետ դադարեցվել Երաշխավորի կողմից:

Սույն Երաշխիքն ուժի մեջ է մտնում տրամադրման պահից և գործում է մինչև _____:

Բանկի վարչության նախագահ՝ _____

Կ.Տ.

Գլխավոր հաշվապահ՝ _____

**ՕՐԻՆԱԿԵԼԻ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ
N _____**

ք. Երևան «___» _____ 2___թ.
....., ի դեմսիյանի, որը գործում է
կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և-ն, ի դեմս
Ընկերության տնօրեն-ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն
պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է *տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման* ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կատարողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

2.4.4 Եթե ծառայության մատուցման երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար Կատարողի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

